ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ընդունվել է 07.03.2018

Գլուխ 1. Անվտանգության խորհուրդը
Գլուխ 2. Անվտանգության խորհրդի կազմը
Գլուխ 3. Անվտանգության խորհրդի գործունեության կարգը
Գլուխ 4. Անվտանգության խորհրդի որոշումները
Գլուխ 5. Անվտանգության խորհրդի բնականոն գործունեության ապահովումը
Գլուխ 6. Եզրափակիչ մաս եվ անցումային դրույթներ

ԳԼՈՒԽ 1
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Հոդված 1. Անվտանգության խորհրդի կարգավիճակը

1. Անվտանգության խորհուրդը պետական մարմին է, որը գլխավորում է վարչապետը:

Հոդված 2. Անվտանգության խորհրդի գործառույթը եւ լիազորությունները

1. Անվտանգության խորհուրդը, Սահմանադրության 155-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան, սահմանում է պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղությունները:

2. Անվտանգության խորհուրդը վարչապետի առաջարկությամբ քննարկում է Հայաստանի Հանրապետության անվտանգությանը, տարածքային ամբողջականությանը եւ սահմանների անձեռնմխելիությանը վերաբերող հարցեր:

3. Անվտանգության խորհրդի լիազորությունները սահմանվում են սույն օրենքով եւ «Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

4. Անվտանգության խորհուրդը պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղություններին վերաբերող հարցերով ընդունում է որոշումներ, իսկ իր իրավասության մեջ մտնող այլ հարցերով՝ խորհրդատվական բնույթի որոշումներ:

ԳԼՈՒԽ 2

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

Հոդված 3. Անվտանգության խորհրդի անդամները

1. Անվտանգության խորհրդի անդամներն են՝

1) վարչապետը.

2) առաջին փոխվարչապետը.

3) փոխվարչապետները.

4) Անվտանգության խորհրդի քարտուղարը.

5) պաշտպանության նախարարը.

6) արտաքին գործերի նախարարը.

7) ազգային անվտանգության ծառայության տնօրենը.

8) ոստիկանության պետը.

9) զինված ուժերի գլխավոր շտաբի պետը:

ԳԼՈՒԽ 3

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

Հոդված 4. Անվտանգության խորհրդի նիստերի կազմակերպումը եւ անցկացումը

1. Անվտանգության խորհրդի գործունեությունն իրականացվում է կոլեգիալ հիմունքներով՝ նիստերի միջոցով:

2. Անվտանգության խորհրդի անդամները պարտավոր են մասնակցել Անվտանգության խորհրդի նիստերին եւ քննարկվող հարցի վերաբերյալ Անվտանգության խորհրդի որոշմանը քվեարկել կողմ կամ դեմ:

3. Անվտանգության խորհրդի նիստերին կարող են մասնակցել նաեւ վարչապետի հրավիրած այլ անձինք:

4. Անվտանգության խորհրդի նիստերը հրավիրում է վարչապետը՝ ըստ անհրաժեշտության, սակայն ոչ ուշ, քան եռամսյակը մեկ անգամ:

5. Անվտանգության խորհրդի նիստերը վարում է վարչապետը:

6. Անվտանգության խորհրդի նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում է խորհրդի առնվազն վեց անդամ:

7. Անվտանգության խորհրդի՝ պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղություններին վերաբերող հարցերով նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում է խորհրդի առնվազն յոթ անդամ:

8. Անվտանգության խորհուրդը լսում եւ ի գիտություն է ընդունում պաշտպանության նախարարի կիսամյակային զեկույցները պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղությունների կատարման վերաբերյալ:

9. Անվտանգության խորհրդի նիստերի օրակարգը, հարցերի քննարկման հերթականությունը եւ հիմնական զեկուցողներին որոշում է վարչապետը:

10. Անվտանգության խորհրդի անդամներն իրավասու են առաջարկություններ ներկայացնելու Անվտանգության խորհրդի նիստի օրակարգի եւ քննարկվելիք փաստաթղթերի վերաբերյալ:

11. Անվտանգության խորհրդի նիստերի օրակարգը եւ քննարկվելիք փաստաթղթերն Անվտանգության խորհրդի անդամներին տրամադրվում են, որպես կանոն, նիստից առնվազն հինգ օր առաջ:

12. Սույն հոդվածի 11-րդ մասում նշված փաստաթղթերն Անվտանգության խորհրդի նիստերին մասնակցող այլ անձանց կարող են տրամադրվել վարչապետի հանձնարարությամբ:

13. Անվտանգության խորհրդի նիստի օրակարգում ներառված առանձին նյութերի ծանոթանալու հատուկ կարգը սահմանում է վարչապետը:

14. Անվտանգության խորհրդի նիստերի օրակարգը, նիստերում քննարկված հարցերի բովանդակությունը, ինչպես նաեւ քվեարկության արդյունքները հրապարակման ենթակա չեն: Սույն կանոնից բացառությունները սահմանում է վարչապետը:

15. Անվտանգության խորհրդում քննարկված հարցերի եւ ընդունված որոշումների մասին վարչապետի հանձնարարությամբ կարող է տարածվել պաշտոնական հաղորդագրություն:

16. Անվտանգության խորհրդի նիստերն արձանագրում է Անվտանգության խորհրդի գրասենյակը:

ԳԼՈՒԽ 4

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Հոդված 5. Անվտանգության խորհրդի որոշումների տեսակները, ընդունման կարգը

1. Անվտանգության խորհրդի՝ պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղություններին վերաբերող հարցերով որոշումներն ընդունվում են Անվտանգության խորհրդի առնվազն յոթ անդամների ձայներով,